ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/254

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Արարատի մարզպետարան
Մասնակից՝ «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/3-ԱՄ» ծածկագրով հրատապ մեկ անձ, բժշկական դիմակների, հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16236-2020 գրությամբ «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզպետարանի 23.10.2020թ. թիվ 05//09916-2020 գրության հիման վրա, 27.10.2020թ.-ին «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 27.10.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 28.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/254 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.11.2020թ.-ին:

2. <u>ՀՀ Արարատի մարզպետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ Արարատի մարզպետարանը 23.10.2020թ. թիվ 05//09916-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար 25.09.2020թ. կազմակերպվել է <<ԱՄ-ՀՄԱՊՁԲ-20/3-ԱՄ>> ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգ: Հայտերի բացումը կատարվել է հայտարարության և հրավերի տեքստերը հրապարակելու օրվան հաջորդող 2-րդ օրացույցային օրվա ժամը 16:00-ին: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 3-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել <<Ալկոթրեյթինգ>> ՍՊԸ-ն: Սահմանված կարգով 08.10.2020թ. պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվել ընտրված մասնակցին, որի ներկայացման վերջնաժամկետը լրացել է 22.10.2020թ.: <<Ալկոթրեյթինգ>> ՍՊԸ-ի կողմից <<ԱՄ-ՀՄԱՊՁԲ-20/3-ԱՄ>> ծածկագրով հրավերի 9.5 կետով սահմանված ժամկետում չի ստորագրվել պայմանագիրը և չի ներկայացվել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. պարբերության պահանջները, խնդրում ենք ձեռնարկել միջոցներ <<Ալկոթրեյթինգ>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ

կետի պահանջները, կից ներկայացվել է «ԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/3-ԱՄ» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.10.2020թ.-ին գրությամբ դիմել է «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16236-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով 20.11.2020թ.-ի նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին՝ չներկայացնելով գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2020/254 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Արարատի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական դիմակների, հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 30.09.2020թ.-ին հայտարարվել է «ԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/3-ԱՄ» ծածկագրով հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ն:

ii. «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/3-ԱՄ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 02.10.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 3-րդ չափաբաժնի մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ին:

iv. 02.10.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյանը էլ. փոստի միջոցով 08.10.2020թ.-ին Մասնակցի alcotrading2020@gmail.com էլ. հասցեին է ուղարկել պայմանագիր կնքելու առաջարկը, որով ներկայացվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել սահմանված կարգով և ժամկետներում այն կնքել: Ինչպես նաև նույն ծանուցմամբ քարտուղարը հայտնել է, որ Պայմանագիրը մարզպետարանի կողմից կկնքվի սահմանված կարգով որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պայմաններում:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյանը էլ. փոստի միջոցով 22.10.2020թ.-ին Մասնակցի alcotrading2020@gmail.com էլ. հասցեին է ուղարկել ծանուցում, որում նշվել է, որ ավարտվում է պայմանագիր կնքելու վերջնաժամկետը՝ հրավերի 9.5 կետով սահմանված 10 աշխատանքային օրը: Եթե մինչև աշխատանքային օրվա ավարտը սահմանված կարգով չներկայացվի կնքված պայմանագիրը, կձեռնարկվի միջոցներ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» պարբերությամբ սահմանված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

vii. 23.10.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է ընթացակարգի 3-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի դրույթը՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե պայմանագիր չի կնքվում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16236-2020 գրությամբ «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը

հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից բժշկական դիմակների, հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 30.09.2020թ.-ին հայտարարված «ԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/3-ԱՄ» ծածկագրով հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 02.10.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյանը էլ. փոստի միջոցով 08.10.2020թ.-ին Մասնակցի alcotrading2020@gmail.com էլ. հասցեին է ուղարկել պայմանագիր կնքելու առաջարկը, որով ներկայացվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել սահմանված կարգով և ժամկետներում այն կնքել: Ինչպես նաև նույն ծանուցմամբ քարտուղարը հայտնել է, որ Պայմանագիրը մարզպետարանի կողմից կկնքվի սահմանված կարգով որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պայմաններում: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Մանուկյանը էլ. փոստի միջոցով 22.10.2020թ.-ին Մասնակցի alcotrading2020@gmail.com էլ. հասցեին է ուղարկել ծանուցում, որում նշվել է, որ ավարտվում է պայմանագիր կնքելու վերջնաժամկետը՝ հրավերի 9.5 կետով սահմանված 10 աշխատանքային օրը: Եթե մինչև աշխատանքային օրվա ավարտը սահմանված կարգով չներկայացվի կնքված պայմանագիրը, կձեռնարկվի միջոցներ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» պարբերությամբ սահմանված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար, սակայն Մասնակիցը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և այն չի ներկայացրել Պատվիրատուին, որպիսի պայմաններում 23.10.2020թ.-ին

www.gnumner.am կայքում հրապարակվել է ընթացակարգի 3-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի դրույթը՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե պայմանագիր չի կնքվում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՄ-ՀՄԱԱՊՁԲ-20/3-ԱՄ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված

մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16236-2020 գրությամբ «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/254 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ալկոթրեյդինգ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**